«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՊՈՐՏԻ, ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ՆՈՐ ՄԱՐԶԱՍԱՐՔԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՎՁՄՋՔ-ԳՀԱՊՁԲ-ՄՐՋՁԲ-19»

ք. Ջերմուկ «08» հունվարի 2020թ.

Ջերմուկի համայնքապետարանը,ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Լայթսպորտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սևակ Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **6705500(վեց միլիոն յոթ հարյուր հինգ հազար հինգ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

1-ին չափաբաժին՝90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

2-րդ չափաբաժին՝90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

3-րդ չափաբաժին՝80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

4-րդ չափաբաժին՝80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

7-րդ չափաբաժին՝500000 (հինգ հարյուր հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
8-րդ չափաբաժին՝500000 (հինգ հարյուր հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
9-րդ չափաբաժին՝400000 (չորս հարյուր հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
10-րդ չափաբաժին՝480000 (չորս հարյուր ութսուն հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
11-րդ չափաբաժին՝480000 (չորս հարյուր ութսուն հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
12-րդ չափաբաժին՝150000 (մեկ հարյուր հիսուն հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
13-րդ չափաբաժին՝160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
14-րդ չափաբաժին՝824000 (ութ հարյուր քսանչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
15-րդ չափաբաժին՝85000 (ութսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
16-րդ չափաբաժին՝30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
17-րդ չափաբաժին՝22000 (քսաներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
18-րդ չափաբաժին՝22000 (քսաներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
19րդ չափաբաժին՝490000 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
20րդ չափաբաժին՝7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
21րդ չափաբաժին՝5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
22րդ չափաբաժին՝5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
25րդ չափաբաժին՝35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
26րդ չափաբաժին՝50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
27րդ չափաբաժին՝20000 (քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
28րդ չափաբաժին՝250000 (երկու հարյուր հիսուն հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
29րդ չափաբաժին՝700000 (յոթ հարյուր հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
30րդ չափաբաժին՝300000 (երեք հարյուր հազար)ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը

միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Ջերմուկի համայնքապետարան	«Լայթսպորտ» ՍՊԸ
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8	ք. Երևան,Ն.Շենգավիթ 12/17
Կենտրոնական գանձապետարան	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900362066012	Հ/Հ 1660007659650100
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ 02272037
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	Տնօրեն՝ Ս.Խաչատրյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«08» հունվարի2020թ. կնքված
N «ՎՁՄՋԲ-ԳՀԱՊՁԲ-ՄՐՋՁԲ-19» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	37431370	LIGHTSPORT	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք Գիպեռ – Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Ոտքերի հենման հատվածը լինի շարժական մի քանի ռեժիմներով: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Մարզասարքի գաբարիտային չափերը 1200*850*900մմ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն: /	հատ	45000	90000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
2	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք փորի պռեսի համար- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից:Գաաբարիտային չափսերը 1400*600*1000մմ: : Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն: /	հատ	45000	90000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
3	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք բիցեպսի սկոտ- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա	հատ	80000	80000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու

			խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից:Գաաբարիտային չափսերը 900*680*900մմ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/							օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
4	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզական շարժական աթոռ- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Մեջքի հենման հատվածը լինի շարժական մինչև 90աստիճան ծալվելու հնարավորությամբ: Գաաբարիտային չափսերը 1250*750*400մմ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	80000	80000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
5	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզական անշարժ աթոռ - Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն: Մարզասրքի գաբարիտային չափերը 930*750*870մմ: : Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	25000	50000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
6	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք Կրոսովեր- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 2300*1000*2250մմ: Մարզասարքի աշխատանքային քաշը ամեն կողմում 70կգ, կազմված 14 հատ 5կգ երկաթյա ռեզինապատ կտորներից: մարզասարքի կոմպլեկտի հետ	հատ	400000	800000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

			տրամադրել բռնակներ տարբեր վարժությունների համար թվով 4հատ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/							
7	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք մեջքի լայնակի մկանների համար - Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 1350*800*2150մմ: Մարզասարքի աշխատանքային քաշը 80կգ, կազմված 16 հատ 5կգ երկաթյա ռեզինապատ կտորներից: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	500000	500000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
8	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք մեջքի կողային մկանների համար Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 1700*800*2100մմ: Մարզասարքի աշխատանքային քաշը 80կգ, կազմված 16 հատ 5կգ երկաթյա ռեզինապատ կտորներից: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	500000	500000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
9	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք սմիթ- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 60*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը	հատ	400000	400000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

			1200*1980*2200մմ: Ծանրաձողի աշխատանքը ֆիքսված ձողերի վրա հիմնված լինի առանցքակալային մեխանիզմի վրա: Մարզասարքի կողային հատվածում 2 հատ 25սմ երկարությամբ քրոմապատ հենարաններ ծանրաքարերի համար: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/							
10	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք ոտքերի հրման համար - Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 80*120մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 2400*860*1550մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Ոտքերի հենման հատվածը կառուցված լինի երկու դիրքերով վարժության կատարելու համար: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	480000	480000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
11	37431370		Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր/ Մարզասարք ոտքի քառագլուխ մկանների համար-- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 1400*1100*1650մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Մարզասարքի աշխատանքային քաշը 60կգ, կազմված 12 հատ 5կգ երկաթյա ռեզինապատ կտորներից: Ոտքերի հենման հատվածը շարժական 3 ռեժիմներով: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	480000	480000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
12	37431283		Ծանրաձողի հենակ/ Ծանրաձողի հորիզոնական հենարան- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը	հատ	150000	150000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիր ն ուժի մեջ մտնելու օրվանից 40

			առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Գաբարիտային չափսերը 1700*1700*1200մմ: Ծանրաձողի հենման հատվածը քրոմապատված 2 ռեժիմներով: Մարզասարքի կողային հատվածում 4 հատ ծանրաքարերի հենարան 25սմ երկարությամբ և քրոմապատված: : Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/							օրացուցային օրվա ընթացքում:
13	37431283		Ծանրաձողի հենակ/ Ծանրաձողի անկյունային հենարան- Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Բարձիկները կարված լինեն արհեստական կաշվից և բարձր խտության գուպկայից: Գաբարիտային չափսերը 1700*1700*1300մմ:Մեջքի հենման հատվածը 45աստիճան թեքությամբ: Ծանրաձողի հենման հատվածը քրոմապատված 2 ռեժիմներով: Մարզասարքի կողային հատվածում 4 հատ ծանրաքարերի հենարան 25սմ երկարությամբ և քրոմապատված: : Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:/	հատ	160000	160000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
14	37431270		Մարզագունդ(հանտել)/ Մեծ քաշերի հանտելներ և հենարան: Հանտելները պատրասատվա' լինի մետաղական ձուլվածքից մեկ կտորով: Եզրամասերը ռեզինամատված առնվազն 5մմ հաստությամբ: Ձեռքի բռնման հատվածը քրոմապատված:Հանտելների չափսերը և քանակը՝2.5կգ-2հատ,5կգ-2հատ,7.5կգ-2հատ,10կգ-2հատ,12.5կգ-2հատ,15կգ-2հատ,17.5կգ-2հատ,20կգ-2հատ,22.5կգ-2հատ,25կգ-2հատ,27.5կգ-2հատ,30կգ-2հատ:Հենարան՝Մարզասարքի կմախքը պատրաստված լինի 40*80մմ մետաղյա խողովակից, խողովակի պատերի հաստությունը առնվազն 3մմ: Գաբարիտային չափսերը 2500*750*800մմ: Գանտելների ֆիքսման համար տեղադրված լինի կիսալուսանաձև պլաստմասե տակդիրներից թվով 56հատ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:	լրակազմ	824000	824000	1	ք. Ջերմուկ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

15	37431270		Մարզագունդ(հանտել)/ Փոքր քաշերի հանտելներ և հանտելների փոքր հենարան: Հանտելները պատրասատվա' լինի մետաղական ձուլվածքից մեկ կտորով: Եզրամասերը ռեզինամատված առնվազն 5մմ հաստությամբ: Ձեռքի բռնման հատվածը քրոմապատված:Հանտելների չափսերը և քանակը(1կգ-4հատ,2կգ-4հատ,3կգ-4հատ):Հենարան(Մարզասարքի կմախքային հատվածը պատրաստված լինի 50*50մմ մետաղյա խողովակից: Գանտելների տարողությունը 10զույգ: Գաբարիտային ճափսերը 500*500*1400մմ: Ներկված լինի փոշեներկման եղանակով սև կամ մոխրագույն:)	լրակազմ	85000	85000	1	ք. Ջերմուկ		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
16	37431280		Ծանրաձողեր/ Ծանրաձող- Երկարությունը 220սմ: Քաշը առնվազն 15կգ: Ամբողջությամբ քրոմապատված: Ծանրաձողի եզրամասերում կողպեքներ 2հատ/	հատ	15000	30000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
17	37431280		Ծանրաձողեր/ Ծանրաձող ֆրանսիական- Երկարություն 140սմ: Ամբողջությամբ քրոմապատված: Քաշը առնվազն 7կգ:/	հատ	22000	22000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
18	37431280		Ծանրաձողեր/ Ծանրաձող 150սմ երկարությամբ: Ամբողջությամբ քրոմապատված: Քաշը առնվազն 8կգ: Ծանրաձողի եզրամասերում կողպեքներ 2հատ:/	հատ	11000	22000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
19	37431320		Ծանրություններ,ֆիտնեսի պարապմունքների համար/ Ծանրաքարեր- Պատրաստված մետաղական ձուլվածքից մեկ կտորով: Ամբողջությամբ ռեզիանապատված առնվազն 5մմ հաստությամբ շերտով: Առմվազն 3 հատ անցք ձեռքի բռնման համար:/Չափսերը և	լրակազմ	490000	490000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա

			քանակը՝2.5կգ-16հատ,5կգ-12հատ,10կգ-10հատ,15կգ-10հատ							ընթացքում:
20	37431240		Քայլային/ստեպ/աէրոբիկայի սարքեր/ Աերոբիկ ստեպ- Պատրաստված լինի պլասմասե ձուլվածքից: Ոտքերի բարձրացման տակդիրներ: Գաբարիտային չաձսեր 650*270*150մմ: Գույնը սև կամ մոխրագույն/	հատ	1875	7500	4	ք. Ջերմուկ	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
21	37421100		Մարմնամարզության գորգեր/ Յոգայի գորգ:Չափսերը.լայնքը 60-70սմ,երկարությունը՝170-175սմ,հաստությունը՝առնվազն 6մմ:	հատ	1250	5000	4	ք. Ջերմուկ	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
22	37431230		Մարզման գնդակներ/ֆիթբոլ/ Ֆիտնեսի գնդակներ՝65սմ տրամագծով:/	հատ	2500	5000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
25	37431142		Բռնցքամարտի պարկեր/ Պատրաստված լինի ամուր բաներային կտորով: Բարձրությունը 150սմ , տրամագիծը 38սմ: Գույնը սև/	հատ	8750	35000	4	ք. Ջերմուկ	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
26	37431142		Բռնցքամարտի պարկեր/ Բռնցքամարտի պարկեր,հատակին դնելու համար:Նախատեսված լինի գետնին դնելու համար:Ներքևի հատվածում լինի տարա ջուր կամ ավազ լցնելու համար:Բարձրությունը առնվազն 165 սմ:Տրամագիծը առնվազն 30սմ:/	հատ	25000	50000	2	ք. Ջերմուկ	2	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
27	39132220		Կախիչներ/ Բռնցքամարտի պարկերի կախիչ- Պատրաստված լինի 25*40մմ չաձսի մետաղյա խողովակից: Գաբարիտային չափսերը 1000*400*500մմ: Ներկված լինի փոշեներկման	հատ	5000	20000	4	ք. Ջերմուկ	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40

			եղանակող սև կամ մոխրագույն/							օրացուցային օրվա ընթացքում:
28	37431190		Հեծանիվ մարզասարքեր/ Էլեկտրոնային վահանակով,մեկ րոպեի սրտի աշխատանքի,ծախսվող կալորյայի,ժամանակի,արագության ֆիքսվող վահանակով,1-8 աստիճան ոտնատեղի ձգողությամբ:Փոփոխվող նստատեղով,մետաղական հիմքով:Թույլատրելի քաշը՝130 կգ:/	հատ	250000	250000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
29	37431170		Վազքուղիներ/ Վազքուղի էլեկտրական:Երկաթյա հիմքով,երկու էլեկտրական շարժիչներով,15 աստիճան բարձրացվող իջեցվող համակարգով,մեկ րոպեի սրտի աշխատանքի,ծախսվող կալորյայի,ժամանակի,արագության ֆիքսվող վահանակով:Տարբեր ծրագրերով մինչև 15 կմ/ժ արագությամբ:Թույլատրելի քաշը՝150կգ.:/	հատ	700000	700000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:
30	37431190		Հեծանիվ մարզասարքեր/ Հեծանիվ դահուկ-ստեպ էլեկտրական/Մետաղական հիմքով,հոսանքին միացվողէլեկտրական ցուցիչով:Ոտքերը,ձեռքերը,մեջքը մարզելու հնարավորությամբ:Ձեռքի կրկնակի բռնակներով:Խմելու ջրի տարան տեղադրելու հարմարանքով,որըամրացված է մարզասարքի իրանի վրա:Դժվարության աստիճանը 10-15:Մեկ րոպեի սրտի աշխատանքի,ծախսվող կալորյայի,,ժամանակի,արագության ֆիքսվող վահանակով,տարբեր ծրագրերով:Նստատեղը շարժական,մետաղական հիմքով:Ձեռքի բռնակները տեղաշարժվող:Արգելակումը մագնիսական դաշտով:	հատ	300000	300000	1	ք. Ջերմուկ	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում:

ատրակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 40 օրացուցային օրվա ընթացքում::

ԳՆՈՐԴ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Լայթսպորտ» ՍՊԸ
ք. Երևան,Ն.Շենգավիթ 12/17
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660007659650100
ՀՎՀՀ 02272037
Տնօրեն՝ Ս.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«08» հունվարի2020 թ. կնքված
N «ՎՀՄՋՔ-ԳՀԱՊՁԲ-ՄՐՀՁԲ-19» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով սխատեսված ափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	90000	90000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	90000
2	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	90000	90000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	90000
3	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	80000	80000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	80000

4	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	80000	80000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	80000
5	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	50000	50000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	50000
6	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	800000	800000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	800000
7	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	500000	500000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	500000
8	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	500000	500000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	500000
9	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	400000	400000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	400000

10	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	480000	480000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	480000
11	37431370	Բազմաֆունկցիոնալ մարզասարքեր	480000	480000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	480000
12	37431283	Ծանրաձողի հենակ	150000	150000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	150000
13	37431283	Ծանրաձողի հենակ	160000	160000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	160000
14	37431270	Մարզագունդ(հանտել)	824000	824000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	824000
15	37431270	Մարզագունդ(հանտել)	85000	85000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	85000

16	37431280	Ծանրաձողեր	30000	30000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	30000
17	37431280	Ծանրաձողեր	22000	22000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	22000
18	37431280	Ծանրաձողեր	22000	22000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	22000
19	37431320	Ծանրություններ,ֆիտնեսի պարապմունքների համար	490000	490000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	490000
20	37431240	Քայլային/ստեպ/աէրոբիկայի սարքեր	7500	7500	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	7500
21	37421100	Մարմնամարզության գորգեր	5000	5000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	5000

22	37431230	Մարզման գնդակներ/ֆիթբոլ/	5000	5000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	5000
25	37431142	Բռնցքամարտի պարկեր	35000	35000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	35000
26	37431142	Բռնցքամարտի պարկեր	50000	50000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	50000
27	39132220	Կախիչներ	20000	20000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	20000
28	37431190	Հեծանիվ մարզասարքեր	250000	250000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	250000
29	37431170	Վազքուղի	700000	700000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	700000

30	37431190	Հեծանիվ մարզասարքեր	300000	300000	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	300000
														Ընդամենը	**6705500**

ԳՆՈՐԴ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362066012
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Լայթսպորտ» ՍՊԸ
ք. Երևան,Ն.Շենգավիթ 12/17
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660007659650100
ՀՎՀՀ 02272037
Տնօրեն՝ Ս.Խաչատրյան

/ստորագրություն/
Կ.Տ